



71. ԾՈՎԻՆԱՐԸ

Մի թաքավոր ա ըլըմ, կնիկ ա ուզըմ, էդ կնիկը ըրեխա չի բերըմ: Օխտը տարին անց ա կենըմ, վրա օխտը տարին մի դարվիշ ա դալի, թաքավորի դռանը կանգնըմ ա, ասըմ ա.— Թաքավորն ապրած կենա, ես գիդեմ, թե քո քեփը խի ա խարաբ:

Ասըմ ա.— Խի՞ ա խարաբ, դարվիշ բաբա:

Ասըմ ա.— Նրա հմար, որ կնիկդ ըրեխա չի բերըմ, մադյանն էլ՝ քուռակ:

Ասըմ ա.— Դարվիշ բաբա, որ դու տհենց իմաստունն ես, դրա հնարն էլ կգիդենաս, բա ո՞նց կլի դրա ճարը:

Ասըմ ա.— Թաքավորն ապրած կենա, քու բաղըմը մի խնձորըքի կա, էս օխտը տարի ա՛ բար չի տալի, հմի նոր մինը բռնել ա, գնա բի կլպե, մեշը կնգանըդ տուր, կլպնին էլ՝ մադյանիդ, թող ուտեն, իրանց վախտին կնիկդ մի տղա կբերե, օխտը տարենն դսըր մադյանդ էլ՝ մի քուռակ: Տղիդ անըմը կդնես Նհար, քուռակինը՝ Բհար:

էդ ասելուն հաղաղ դավրիշը բաթմիշ ա ըլըմ:

Թաքավորը գնըմ ա բաղը, տենըմ ա, որ դրուստ հրես մի ծառի վրա մենակ մի խնձոր կա: Ոնց որ դարվիշն ասել էր, նհենց էլ անըմ ա:

Կնգա վադեն թմամվըմ ա, ազատվըմ ա, մի սիրուն տղա յա

բերում, ձիու վագեն էլ թըմամվում ա, ցնգնում ա, մի սիրուն քու-
ռակ ա բերում: Ով տարով կվենձանա, Նհարն ու Բհարն օրով են
վենձանում: Նհարը որ ոտնավորվում ա հա, գնում ա գոմը, ամեն
օր Բհարին կորմիտ ա անում ու թիմարում:

Օրվա մի օրը Բհարը լիզու ա ըլում, ասում ա.— Նհար, որ տեղը
ենդվի, կգաս իմ կուշտը հարցմունքի:

Մի վախտ անց ա կենում, Նհարն էլ հասած տղա յա գառնում.
մի դափիլ ծակուն ա ըլում, շանջուն ջիգարն ա տալի: Կուշ ու հուփ
գալով հասնում ա գոմը, ասում ա.— Բհար ջան, ես մեռա, հնար
ունիս՝ տես:

Ասում ա.— Վախիլ մի, աշու ձեռք ձախ կոխկո տար, ընգի մի
խանջալ կա, հանե:

Ձեռը կոխկն ա տանում, դրուստ որ մի խանջալ ա հանում:
խանջալի վրա տենում ա մի սիրուն ախշկա նկար, տակին գրած՝
Մովինար:

Որ տենում ա, խելքի ծերը գնում ա, ցավն էլ ա մտահան անում,
բանն էլ:

Բհարն ասում ա.— Հե՛, Նհար, ի՞նչ էլավ քեզ հետ:

Ասում ա.— Բհա՛ր, Մովինարին ո՞րդի կգղնունք:

Ասում ա.— Շատ ա դժար, հմա քեփո խարաբ մի անիլ, կգրդ-
նունք: Գնա, — ասում ա, — մի հատ թամբը շինիլ տուր, բի վրես
դի, փորս պինդ քաշե, վեր իլ, ես քեզ կտանիմ քո Մովինարի
կուշտը:

Նհարը գնաց մի լավ թամբը շինիլ տվուց, բերուց թամբեց.
վեր էլավ, ու ընգան ճամփա:

Գնացին, գնացին, շատն ու քիչն իրանք գիղեն, գնացին մի սև
երգրի ըռաստ էկան, տեհան ամեն բանն էլ սև ա: Մին էլ տեհան
մի սև ձիավոր դուս էկավ ու դրանց ճամփեն կտրեց ու հարցրուց.—
Ո՞ւր եք գնում, սա իմ երգիրն ա, ի՞նչ իրավունքով եք մտել իմ ֆողը:

Ասավ ու թուրը հանեց, վրա բերուց Նհարին: Նրա վրա բերել-
նու հաղաղ Բհարը ծուլ էլավ, երգնքի ծերը հասավ, թուրը մնին
էլա դիբավ ոչ:

Բհարն ասավ.— Նհա՛ր, վախիլ մի, դու սրան ղոռիլ տիս, հմա
սպանես ոչ, սա քու ախպերը կդառնա:

Նհարն ասավ.— է՛, ախպերացու, քու թուրն ինձ բան չի անիլ,
ես էլ թուր ունիմ:

Ասելուն պես խանջալը կոխկիցը հանեց թե չէ՝ շոխկն ընգավ
էդ երգրի վրա, սև մարթի աշկերը փաղեց: Ծղ խանջալը տեղը

դրուց, սև մարթը մոդ էկավ, բարըշեցին, դառան իրար ախպերացու ու դնացին: Գնացին տեհան էդ սև երգրի ծերին իրեք ախպեր մի ղրաղին են կուլըմ, մի ղոշուն՝ մի ղրաղին: Բհարին պահ տվուց սև ախպորը, ինքն աղաք գնաց:

Ասավ.— Թե շատի կուռն ընգնիմ, կասեն՝ «վախուկ աս», լավն էն ա իրեքի կուռն ընգնիմ:

Անց կացավ իրեքի կուռն ու ղոշունի մի ղրաղից սրփեց, մեկել ղրաղին դուա էկավ: Էն կուլող իրեք ախպոր բերանը բաց էր մնացել, մնացել էին կաղնած: Որ կուլվը պրծավ հա, իրեքն էլ էկան դրան գլուխ տվին, տարան իրանց տուն, իրանց հորը վասմուհալին սսին: Հերնեբուն թաքավոր էր:

Ասավ.— Չէ՛, կաս, կաս ոչ, իմ փեսեն տիս դառնալ:

Ախլկանը որ տեհավ, թաքուն ասավ.— Իմ մուրազն էն ա, որ ձեր ախլըկանը տաք իմ ախպորը:

Դրանք ուզի էլան, ախպորը կանչեցին, հրսանիք արին, օխտն օր, օխտը քշեր հրսանիքը քաշեց:

Վրա օխտն օրը Նհարը մատնուքը հանեց իրա աչու ձեռի մատիցն ու տվուց սև ախպորը, ասավ.— Քեզ թող եմ անըմ քու քեփը քաշե, ես գնըմ եմ, որ վախտն էդ մատնուքը կսեանա, իմ տեղը նեղ ա, հասի իմ հավարին:

Բհարին նստեց, եդ ճամփա ընդան ու գնացին: Գնացին, գնացին, եդ շատն ու քիչն իրանք գիղեն, գնացին հասան հմի էլ մի սպիտակ երգիր: Էդ երգրումըն էլ ամեն բանը սպիտակ էր: Հմի էլ մի սպիտակ ձիավոր ա դրանց աղաքը կտրըմ: Եդ նհե կուլըմ են, ախպերանըմ են վերը, աղաք գնըմ: Եդ նհե շհըմ են մի ուրիշ իրեք ախպոր ու ղոշունի կուլի: Եդ իրեք ախպոր կուռն ա ընգնըմ Նհարը, ղոշունին ղոռըմ, գլուխդ ինչ ցվացնեմ, վերչն էդ իրեք ախպոր քվորն էլ հրսանիք ա անըմ սպիտակ ախպոր հետ, ձախու ձեռի մատնուքն էլ դրան ա տալի, թամբահ անըմ, որ՝ որ վախտը խըվարի՝ հավարին հասնի: Ինքը Բհարին նստըմ ա, ընգնըմ ճամփա:

Գնըմ են, գնըմ եդ, շատն ու քիչն իրանք գիղեն, հասնըմ են հմի էլ մի կանանչ երգիր: Էդ երգրումն էլ ամեն բան կանանչ ա: Ըտի էլ մի կանանչ ձիավոր ա դուա գալիս, եդ նրանց վասմահալի պես ախպերանըմ ա հետը, եդ շհըմ են՝ մի ուրիշ իրեք ախպոր ու ղոշունի կուլի, զոռըմ ա ղոշունին, իրեք ախպոր քվորն էլ տալիս ա կանանչ ախպորը, իրա ոսկե քամարը տալիս ա կանանչ ախպորը, թամբահ ա անըմ— որ սեանա՝ իրան հավարին հասնի: Ինքը եդ վեր ա ըլըմ Բհարին, ընգնըմ ճամփա:

Ասավ.— Բհար շահ, բա հմի՞ ոնց տինք անիլ:

Ասավ.— Կարմիր երգրըմը մի ծով կա, էդ ծովի միչին մի պալատ կա, Մովինարն էդ պալատըմն ա, նրա հմար ծովի ղրաղին վենձ կռիվ ա, կգնանք կզոռենք, քեզ կհասցենեմ քու Մովինարի կուշտը:

էկան տեհան մի ղոշուն մի ղրաղին ա կովըմ, իրեք ասլան էլ՝ մի ղրաղին, էդ ասլաննին թոզ չեն անըմ, որ ղոշունը ծովին մոտ կա: Բհարին ճիպտեց, էդ ղոշունի մի ղրաղից կտորելով՝ մեկել ղրաղին դու առավ: Ուզեց մոտ գա ծովին— ասլաննին թողին ոչ: Օրը որ մթնեց, ասլաննին գնացին դինջանալու:

Բհարն ասավ.— Դրանց հետ կարալ չենք կովիլ, ամենադժար տեղն ենք հասել, ամեն քշեր գնա մնին սպանե, արի:

Նհարը գնաց քշերը մնին սպանեց, լիսաբաշտեն եդ էկավ: Եդ մութն ընգավ, գնաց մնին էլ սպանեց, լիսաբաշտեն էկավ, էքսի քշերն էլ մնին սպանեց, լիսաբաշտեն որ երգիրը կարմրին տվուց հա, վեր էլավ Բհարին, թոցրուց ծովի վրովը, գնաց Մովինարի պալատի դռանը վեր էկավ:

Բհարն ասավ.— Դե գնա, որդի փագ դուռ տենաս խանջալը դեմ արա՝ բաց կլի:

Գնաց մտավ պալատը, որդի փագ դուռ ջհեց, խանջալը դեմ արավ թե չէ՝ բաց էլավ: Գնաց մի օթախ մտավ որ՝ կարմրութենի շոխկն աչկերը ծակեց: Տեհավ մի սիրուն ախչիկ նստած, հենց իրա խանջալի վրի նկարն ա որ կա: Մովինարը տեղիցը վեր կացավ ու էկավ՝ իրար շինքով ընգան:

Ասավ.— Նամարդ, ասլաննին քեզ կծիլ չէին, խի՞ սպանեիր. նրանք մեզ կպահեին, դուշմանին մոտ չէին թողուլ, հմի որ ասլաննու հետ կովող ղոշունի թաքավորն իմանա, որ ասլաննուն սպանել ես, գալ տի եդ ինձ փախցնելու:

Ասավ.— Արխեին մնա, օշով կարալ չի քու մագին դիպչի:

Մխելի վախտ անց կացավ, կարմիր երգրի թաքավորն իմացավ, որ ասլաննին էլ կան ոչ, ղոշուն հվաքեց ու էկավ ծովի ղրաղին շադիր վեր թողուց, հմա Նհարի ահիցը կարաց ոչ ծովն անց կենա:

Մի ջադուքար պառավ գալիս ա ասըմ.— Իմ քաշով մին ոսկի տուր, մին էլ մի սիրուն խնոցի շինե, ինձ տուր՝ ես գնամ Մովինարին գողանամ բերեմ:

Ոսկին էլ տվուց, խնոցին էլ, պառավին ղրգեց: Պառավը խնոցուն վեր ա ըլըմ, գալի հասնըմ պալատին: էդ վախտը Նհարը ֆոր-

սի գնացած ա ըլլամ: Գալիս ա պառավը, դուռը բաց անըմ, մտնըմ նի: Մովինարը մենակ նստած կար անելիս ա ըլլամ, դրան տենըմ ա թե չէ, վիետը քաշըմ ա՝ դուս անըմ:

Դա դանչանք ա անըմ, ասըմ ա.— Անդեր պառավ եմ, ինձ մի տեղ տուր կենամ, ձեր տունը կավլեմ, ձեր ոտները կլվանամ, խորակը կեփեմ:

Ինչքան դանչանք ա անըմ, Մովինարը բանի տեղ չի դնըմ, դուս ա անըմ: Նհարի ֆորսիցը եղ գալու վախտը գնըմ ա պատի տակին կուչ գալի, մթամ թե լաց ա ըլլամ: Նհարը գալիս ա թե չէ, հմի էլ նրան ա դանչանք անըմ: Որ էդ պատառտոված շորերըմ տենըմ ա հա, մեխկը գալիս ա, ձեռիցը բռնըմ ա, տանըմ տուն:

Մովինարն ասըմ ա.— Դրանից մեզ վնաս կգա, դուս արա կորչի:

Ասըմ ա.— Մի բան էլա ըլիլ չի, քյասիբ պառավ ա, թող մի կտոր հաց ուտե, իրա հմար ապրի: Նա՛ հա, նա՛ չէ, վերջը թողըմ են:

Դա ղոչաղութին ա անըմ, շրփշրփըմ ա, պրանց աչկին դիր ա գալի, դրան բերըմ են թազա շորեր հաքցնըմ, իրանց հետ ուտացնըմ, խմացնըմ, պհըմ:

Մի օր Նհարը գնըմ ա ֆորսի, պառավը մտնըմ ա Մովինարի տամարը, ասըմ ա.— Դու որ էդքան մարթիդ սիրըմ ես, խի՞ չես հարցնըմ, թե դրա հունարն ընչումն ա, որ էդքան ղոշունի շփլթուն կտրեց:

Ըրիդունը մութն ընգնըմ ա, քնելու վախտը գնըմ ա մտնըմ դրանց կրավաթի տակը:

Մովինարը Նհարի եխեն կտրըմ ա, թե.— Քու հունարն ընչումն ա:

Ասըմ ա.— Իմ հունարն իմ խանջալըմն ա:

Պառավն կրավաթի տակիցն իմանըմ ա, հլե դրանք քնըմ են թե չէ, դուս ա գալի, խանջալը ծոցիցը հանըմ ա, գձըմ ծովը: Որ ծովն ա գձըմ հա, Նհարը կիսամեռ ա դառնըմ: Ըռավողը Մովինարը հե գիդենըմ ա՝ քնած ա: Ինքը դուս ա գալի դուռը, ծովին թմաշա անըմ:

Պառավը ստանութին ա անըմ, ասըմ ա.— Արի գնանք ծովի դրաղին մի քիչ ման գանք:

Սեհըրն անելով, տանըմ ա իրա խնոցու կուշտը հասցնըմ:

Մովինարը որ հուրհրատին տալով խնոցին տենըմ ա, ասըմ ա.— էս ի՞նչ ա սհե սիրուն:

Ասրմ ա.— Հլա գնանք տենանք:

Տանրմ ա միչին նստացնրմ, ասրմ ա.— Ա՛ խնոցի, քեզ որդի տենամ՝ ծովի ղրաղին:

Հլի շկելն աշկնեռուն բաց ու խուփի են անրմ, մին էլ տենրմ են ծովի ղրաղին են:

Թաքավորն աղաք ա գալի, ուզում ա մոտ գա, Մովինարը մոտ չի թողրմ, ասրմ ա.— Չկելը քառասուն օրը թմամվի ոչ, ես մարմն չեմ կուշտս թողուլ:

Տհնց դրանց թողունք, հարց տանք Նհարից: Ախպորտանց մատնուքը մատին ա հուպ տալի, մինն էլ՝ քամարը, մտիկ են անրմ տենրմ, որ սևացել են: Գալիս են ընդի հասնրմ, տենրմ, որ Բհարը գեղինը փորրմ ա, Ֆողը ոտով գլխին ածրմ, քրդնքըմ տրաքրմ:

Ասրմ են.— Բհար ջան, ի՞նչ անենք:

Ասրմ ա.— Պառավը Նհարի խանջալը վրա արավ, յա ծովն ա ընդել, յա աստղերին ա հասել, յա ցամաքն ա ընգել:

Սպիտակ ձիավոր ախպորն ասրմ ա.— Դու գնա աստղերին ժողով արա, Կանանչին էլ ասրմ ա.— Դու ձիդ քշե, ընդի ցամաքը. ժողով արա ամեն ֆոքավորի: Սեին էլ ասրմ ա.— Դուն էլ ձիդ քշե ծովի տակը, ժողով արա ձկներին, հարց էլեք, տեհեք ում կշտին ա, խանջալը բերեք, Նհարին ուշկի բերեք:

Ասելու հաղաղ Սպիտակը երկինքն ա բըցրանրմ, Կանանչը՝ ցամաքը գնրմ, Սեն էլ՝ ծովի տակը: Գնրմ ա ծովի ձկներին թուփ անրմ ժողովի, տենրմ ա խանջալը մնի կշտին էլ ա կա ոչ:

Ասրմ ա.— Բա էլ ձուգը չի կա՞:

Ասրմ են.— Մինը հիվանդ ա:

Ասրմ ա.— Ծս դրան կսաղացնեմ, բերեք:

Բերրմ են, տենրմ ա, խանջալը միչկըմը թաղված: Քաշրմ ա հանրմ, միչկի փշերը չիմ խանջալի հետ դուս են գալի:

Ասրմ ա.— Դու կսաղանաս ու կդառնաս էս ձղների իշխանը:

Չկել ըսօր էլ էտ ձգանն իշխան են ասրմ:

էտա խանջալը ձեռին գալիս ա, դալիս ա տենրմ դաթի էն մեկել ախպերտինքը դառդակ են եկել: Խանջալը դնրմ են Նհարի կոխկին թե չէ՝ զարթնրմ ա:

Ասրմ են.— Բա էս ո՞նց էլավ:

Ասրմ ա.— Մհե՛-սհե՛:

Դրանք ձիանը նստրմ են, ընդի հասնրմ, որ Մովինարի քառասուն օրը թմամվել ա, տուլին էրեսն են քաշել, ուզրմ են ժամը

տանին, որ թաքավորի հետ հրսանիք անեն: Մովինարի աչկը ճամփի ա ըլլմ, թեզ-թեզ եդ ա մտիկ անըմ ըրտասունքն աչկերին, բալի հավարին հասնին նհարն ու Բհարը:

Շմա մտկըմը դրած ա ըլլմ, որ ժամը մտնին թե չէ, շեմքըմն էվետ դանակն իրա սրտըմը թաղե: Մին էլ եդ ա մտիկ անըմ, տենըմ ա թոզ ու դումանը երդինքն ա կալել: Էդ վախտը Սպիտակ ձիավորը ձին քշըմ ա, թաքավորի մազերիցը բռնըմ, վրա ա անըմ, տալի աստղերի ճկատովը, թիքա-թիքա անըմ: Սև ձիավորն էլ շադուքար պառավի մազերիցն ա բռնըմ, վրա անըմ ծովը գցըմ, ձգների փայ անըմ: Կանանչ ախպերն էլ հակալ-հակալ ընգած ոահաթին արխեինացնըմ ա, որ հե դիդեին, թե իրանց էլ տին կտորիլ: Նհարն էլ գնըմ ա Մովինարին փթաթվըմ:

Ասըմ ա.— Բա որ ասեի՝ ասլաննուն գուր ես սպանել:

Եդնա խախը թոփ են ըլլմ, շիմն էլ ուրխանըմ, որ իրանց ազատել են դեշ թաքավորից, պատիվ են տալի, խաղ ու ծաղկով, ծափ ու ծիծաղով դրանց ճամփու են տնըմ, իրանք էլ իրանց գործին կենըմ:

Ախպերտինքն էլ բերըմ են նհարին ու Մովինարին հրսանիք անըմ, նրանք իրանց մուրազովն են ուրախանըմ, դուն էլ քո մուրազովն ուրխանաս:

